

Կորոնավիրուսի հիվանդանոցի անդին՝ արագ քայլեր այս պահի համար

Համառոտագիր



Մարդկային
գարգացման
միջազգային
կենտրոն

Նախաբանի փոխարեն

Քաղաքականության տվյալ համառոտագրի այս հատվածում պետք է լինեն բնութագրի առնված սցենարների պարագայում նոր կորոնավիրուսի տարածման առողջապահական և տնտեսական հետևանքների սպեկտրի հակիրճ ներկայացումը Հայաստանի համար, որպեսզի ըստ դրա տրվեն հետագա առաջարկների շարադրանքը: Բայց դա մենք չենք անի, քանի որ ավելի ակնառու խունապի տարածում պարզապես չի լինում: Այս փաստաթուղթն ընթերցող քաղաքականությունն մշակողներին պարզապես վստահեցում ենք, որ այլ հավասար պայմաններում հնարավոր զարգացումները, մեղմ ասած, լավը չեն, և արագ ու մտածված քայլեր են պետք հենց հիմա:

Մի եզրակացություն, սակայն, կարելի է շեշտել՝ առանց մողեղների նրբությունները ներկայացնելու: Հայաստանը չպետք է որդեգրի նոր կորոնավիրուսի տարածումը մեղմելու քաղաքականություն: Հայաստանը պետք է հայտարարի ու իրականացնի կորոնավիրուսի գրոյացման քաղաքականություն: **Ուղղակի պետք է որդեգրել գրոյացման քաղաքականություն. երկար ու պինդ փակել բոլորին տներում, պարզ խոսել այդ մասին, չստեղծել իլյուզիաներ ու վճարել մարդկանց տանը նստելու համար:** Մյուս բոլոր տարբերակները ցիկլերով պարզապես հետաձգելու են այս որոշման կայացումը:

Զոսակարգված ընդհանրական առաջարկներ քաղաքականություն մշակողներին

- Զանի որ, առնվազն կարճաժամկետ ապագայում, տնտեսության վիճակը ամբողջապես պայմանավորված է լինելու կորոնավիրուսի տարածման և դրանով թելադրվող զարգացումներից, տնտեսական բնարկումներում ներառել համաճարակաբանների, բժիշկների:
- Գիտակցել, որ տնտեսական անկումն անխուսափելի է ու այն շատ կտրուկ է լինելու: Միևնույն ժամանակ հաշվի առնել, որ, ի տարբերություն 2008-09 թվականների տնտեսական ճգնաժամի հաղթահարման փորձի, ներկայում հնարավոր է տնտեսությունն ավելի արագ վերականգնել, սակայն դրա համար անհրաժեշտ է լինել առավել ճկուն ու սահմանել առավել հստակ թիրախներ: Պետք չէ դառնալ նախկին խոստումների ու մինչև ճգնաժամը հաստատված ծրագրերի իրականացման գոհը:
- Անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ աղքատության խորացումն անխուսափելի է հիմնական թիրախը պետք է ուղղված լինի այն մեղմելուն, պետության սոցիալական ապահովության գործառնությունը պետք է աշխատեցվի արագացված ու առավել ծավալային:
- Օգտվել նախկին ճգնաժամից քաղված դասերից և մշակված խորհուրդներից, ակտիվորեն աշխատել նորերը մշակելու ուղղությամբ: (Օրինակ՝ Collecting Taxes During an Economic Crisis: Challenges and Policy Options¹)
- Ընդունել, որ այս ճգնաժամից հետո աշխարհում, ինչպես նաև Հայաստանում ձևավորվելու է «նոր տնտեսություն»:
- Մշակել այլընտրանքային օժանդակության փաթեթներ, պատրաստ լինել այլ զարգացումների, ընդլայնել որոշումների կայացումը սնող՝ «մտածող-վերլուծական» հատվածը:
- Լինել թափանցիկ: Պահանջել, որ բոլորը դրսևորեն իրենց նույն կերպ, լինի դա միջպետական հարաբերություններում, թե սեփական քաղաքացիների հետ հաղորդակցության և համագործակցության շրջանակներում:
- Մշտապես կոչել հանրությանը զգոնության, միևնույն ժամանակ վստահել հանրությանը, առավել տեսանելի և հասկանալի կերպով ներկայացնել նախկին համաճարակներից (օրինակ՝ SARS-ը) քաղված դասերն ու հաղթահարման հաջողությունները:

¹ <https://www.imf.org/external/pubs/ft/spn/2009/spn0917.pdf>



Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org



Չդասակարգված ընդհանրական առաջարկներ տնտեսական քաղաքականությունը մշակողներին

- Աշխարհի պետությունները գնում են տնտեսություններ փող ներարկելու, անվերադարձ ծախսեր անելու ճանապարհով: Ե՛հիշտ են անում: Հարուստ երկրները ՀՆԱ-ի մինչև 9-10 տոկոսի հասնող փաթեթներ են մշակում: Աշխարհի կառավարությունները հիմար չեն. միանշանակորեն գիտակցվում է նման ծախսերի անվերադարձ լինելու բնույթը: Հայաստանը չունի և չի կարող սեփական տնտեսությանը օգնության նման ծավալի փաթեթներ առաջարկել, այս տարվա ընթացքում տնտեսություն նվերադարձ ներարկել 500 միլիարդ դրամից կամ 1 մլրդ դոլարից ավելի գումար: Ամեն դեպքում լրացուցիչ ֆիսկալ բեռի տակ մտնելը այլընտրանք չունի և ենթադրում է ոչ շտապողական, սակայն հրատապ որոշումների կայացում:
- Հարկավոր է շտապ ձեռնամուխ լինել 2020թ. պետական բյուջեի մասին օրենքը վերափոխելուն՝ Էական միջոցներ ազատելով ճգնաժամի դեմ պայքարի համար:
- Անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել միջազգային օժանդակության փաթեթներից ակտիվորեն օգտվելու ուղղությամբ: Աշխարհում հիմա շատ փող է բաժանվելու. անհրաժեշտ է մեծ ճկունություն դրսևորել՝ դրանից առավելագույն չափով օգտվելու համար:
- Մտածել է պետք մարդկանց պարտքային բեռի նվազեցման ուղղությամբ:
- Նպատակային ու արդյունավետ հաղորդակցություն է անհրաժեշտ ձևավորել հանրության հետ՝ հետևյալ ուղերձները փոխանցելու նպատակով.

Ինչ չանել. ուղերձ հանրությանը և գործարար համայնքին.

- Չընկալել ինքնամեկուսացումը որպես հարկադիր պարապուրդ կամ էլ արձակուրդ:
- Չընկալել ինքնամեկուսացման կամ տեղաշարժի սահմանափակման հետագա հնարավոր սահմանափակումները որպես ժամանակավոր. դրանք կարող են ավելի երկար տևել՝ կախված ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի վիճակից:
- Նույնիսկ եթե հնարավոր լինեն արագացված լուծումներ, օրինակ՝ նոր վակցինա, չակնկալել, որ դրանք հնարավոր կդառնան հունիսից շուտ:
- Չգնալ արկածախնդրության ուղով. պետք չէ պղտոր ջրում ձուկ որսալ՝ սա տազնապ է, արտակարգ իրավիճակ, որտեղ զգոն ու կշռադատ քայլեր են անհրաժեշտ:

Ինչ անել. ուղերձ հասարակությանը.

- Տրվելիք օժանդակության փաթեթներն ու միջոցները խոհեմորեն տնօրինել, առաջնայինը պարտքի մարումն է, եթե օժանդակություն ստացող մարդիկ պարտքերը չմարեն, ապա տնտեսական կոլապս կստեղծեն, որից հետո ոչ մի օժանդակություն այլևս չի վերականգնի իրավիճակը:
- Գործարարներին. նորովի մտածել, ենթադրել, որ այս իրավիճակը եռակի ավելի երկար է պահպանվելու, քան այս պահին իրենք մտածում են, և աղապտացնել իրենց բիզնեսն այդ ուղղությամբ:
- Այս պայմաններում մտածել մրցունակության մասին, պահպանել կարևոր ակտիվները, այդ թվում՝ կադրերը:
- Ու ամենակարևորը՝ սովորել, սովորել, սովորել: Հիմա արագ նոր գիտելիքի ձեռքբերման շրջան է, այլապես ամեն ինչից հետ կմնանք: Կարդացեք ամեն ինչ, հետազոտեք, գտեք նոր լուծումներ: Դրսում պատերազմ է. պատերազմ մարդկային կյանքեր ու տնտեսություններ փրկելու համար: Միայն նորացված գիտելիքով է հնարավոր հաղթել այդ պատերազմում:

Համառոտագիրը մշակվել է 29.03.2020թ. կայացած «Տնտեսական քաղաքականությունը կորոնավիրուսի ճգնաժամի պայմաններում» խորագրով առցանց քննարկման արդյունքում «Հայաստանի Հանրապետության դրամավարկային և ֆինանսական հատվածի արդյունավետ հաղորդակցության ուղիների պարզացմանն ուղղված» ծրագրի փորձագիտական խմբի կողմից: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ ԿԲ պատասխանատու պաշտոնյաներ, հայաստանյան փորձագիտական դաշտի ներկայացնող պրոֆեսիոնալներ, ինչպես նաև փորձագետներ ԱՄՆ-ից, Հունաստանիս, Իսպանիայից, Գերմանիայից: Ծրագիրն իրականացնում է «ԱյՄիԷյԴի. Մարդկային պարզացման միջազգային կենտրոն»-ը՝ «Տնտեսագիտական կրթության և հետապոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ: